

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/6

1 դեկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ գանգատը ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 10.02.2015 թ-ի թիվ 5/5 որոշման պահանջները կատարելու վերաբերյալ:

«Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարի 30.09.2014թ. թիվ ԱՀ-028505 հանձնարարագրի հիման վրա և 30.09.2014թ. թիվ 028505 որոշմամբ արգելանք է կիրառվել «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա 48.768.300 դրամի չափով: ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ն 30.09.2014 թ-ի թիվ 947 գրությամբ դիմել է «ՀԱՅԷԿՈՆՈՄ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին, խնդրելով ընկերությանը պատկանող հաշվեհամարների վրա 48.768.300 դրամի չափով արգելանք դնել: ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ն դիմել է նաև ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության վայոց Ձորի մարզային բաժնի և ներկայացրել Եղեգնաձորի ՏՀՏ-ի պետի թիվ 131 որոշումը: 27.12.2014 թ-ին ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության վայոց Ձորի մարզային բաժնի պետի տեղակալի թիվ ՈՍ0356-56842/14 որոշումով ընկերությանը պատկանող գույքի և դրամական միջոցների վրա արգելանք է դրվել: «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ն 23.01.2015 թ-ին բողոք է ներկայացրել ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով, խնդրելով անվավեր ճանաչել 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումը: ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը 10.02.2015 թ-ին նշված բողոքի հիման վրա կայացրեց թիվ 5/5 որոշումը՝ համաձայն որի Եղեգնաձորի ՏՀՏ-ին հանձնարարվել է ձեռնպահ մնալ թիվ 131 որոշման կատարմանը ուղղված գործողություններից և դիմում ներկայացնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն՝ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումը վերադարձնելու մասին: ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ն 20.02.2015 թ-ի գրության հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության վայոց Ձորի մարզային բաժնի 24.02.2015թ թիվ ՈՍ0356-65826/15 որոշումով վերացվել է ընկերության գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները:

Մինչույն ժամանակ «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ չի կարողանում անարգել օգտվել «Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ-ում առկա իր բանկային հաշվեհամարից, քանի որ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ կողմից ընկերության հաշվեհամարների վրա կիրառվել են արգելանքներ, որի համար հիմք է հանդիսացել 30.04.2014 թ-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 028505 որոշումը: Այսինքն ստացվում է, որ ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ-ի կողմից մինչ օրս չի պահպանվել գանգատարկման հանձնաժողովի 10.02.2015 թ-ի թիվ 5/5 որոշման պահանջները:

Հարցի կարգավորման նպատակով ընկերությունը գրությամբ դիմել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է ձեռնարկել միջոցներ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 10.02.2015 թ-ի թիվ 5/5 որոշման պահանջները կատարելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.04.2014 թ-ի թիվ 1010339 հանձնարարագրի համաձայն «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 48.580.721 դրամ:

«Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ կողմից Ակտի դեմ ՀՀ ֆինանսների նախարարություն բերվել է գանգատ: Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ակտով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմք է հանդիսացել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 03.07.2014 թ-ի ակտը, որը վիճարկվում է դատական կարգով, 14.10.2014 թ-ին ընդունել է թիվ 22/3 որոշումը, որի համաձայն 18.09.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից 18.09.2014 թ-ին կայացվել է թիվ 131 որոշումը «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ից 48.768.310 դրամ պարտավորության գումար գանձելու մասին: Ընդ որում, գանձման առաջադրված պարտավորության գերակշիռ մասն առաջադրվել է Ակտով, որի դեմ բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը Հանձնաժողովի թիվ 22/3 որոշմամբ կասեցվել է:

ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշումը հիմք է հանդիսացել նաև «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ի գույքի վրա արգելանք դնելու մասին 30.09.2014 թ-ի թիվ 028505 որոշումը կայացվելու համար, որով արգելանք է կիրառվել ընկերության գույքի վրա՝ գումարով 48.768.300 դրամի չափով:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից 18.09.2014 թ-ի թիվ 131 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության գերակշիռ մասն արձանագրվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտով, որի դեմ ընկերության կողմից 18.09.2014 թ-ին բերված գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը գտնվում է կասեցման փուլում: Ընդ որում հարկ է նշել, որ վերոգրյալ Ակտի դեմ գանգատը բերվել է մինչև ընկերության գույքի վրա արգելանք դնելու մասին 30.09.2014 թ-ի թիվ 028505 որոշման կայացնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ 30.09.2014 թ-ի թիվ 028505 որոշմամբ ընկերության գույքի (բանկային հաշիվների) վրա կիրառված արգելանքը ենթակա է վերացման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին.

Վերացնել «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ի գույքի վրա կիրառված արգելանքը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ